

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«ՄԼ ՖԵՇՆ» ՍՊԸ Խորհրդի
«11» օգոստոսի 2026թ. թիվ 11/08-01 որոշմամբ

«ՄԼ ՖԵՇՆ» ՍՊԸ

**ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԴՐԱՆՑ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ԱՆՁԱՆՑ,
ԱՅԼ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ
ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ
ԿՆՔԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ
(ԿԱՆՈՆԱԿԱՐԳ)**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «ՄԼ ՖԵՇՆ» ՍՊԸ (այսուհետ Ընկերություն) ներքին տեղեկությունների գաղտնիության պահպանման և դրանց բացահայտման գործընթացի կարգավորման, ինչպես նաև ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից Ընկերության կողմից թողարկված արժեթղթերով գործարքներ կնքելու գործընթացը կարգավորող ներքին կանոնները:

1.2. Սույն կանոնակարգի կանոնները մեկնաբանվում են՝ ելնելով արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակների առավել լիարժեք իրագործման և հաճախորդների իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից:

2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. «**Ներքին (ինսայդերական) տեղեկություն**»՝ ցանկացած չիրապարակված տեղեկություն, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում է մեկ կամ մի քանի արժեթղթերին կամ դրանց թողարկողներին, և որի հրապարակումը կարող է էական ազդեցություն ունենալ նշված արժեթղթերի և (կամ) դրանց հետ կապված ածանցյալ գործիքների գների վրա: Մասնավորապես, ներքին (ինսայդերական) տեղեկություն կարող է հանդիսանալ՝

- 1) Չիրապարակված հաշվապահական հաշվետվությունները,
- 2) Ընկերության ծախսերի, եկամուտների կամ շահույթի վերաբերյալ հիմնավոր կանխատեսումները,
- 3) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների էական փոփոխությունները,
- 4) Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ կազմակերպության փոփոխման վերաբերյալ տեղեկությունները,
- 5) Ընկերության նշանակալից մասնակիցների կազմի փոփոխության վերաբերյալ տեղեկությունները,
- 6) Ընկերության կառավարման մարմինների կազմի փոփոխությունները (բացառությամբ Ընկերության մասնակիցների կազմի փոփոխությունները),
- 7) էական դատական վեճերում Ընկերության մասնակցության վերաբերյալ տեղեկությունները,
- 8) Ընկերության վերակազմակերպման վերաբերյալ տեղեկությունները,

- 9) Արժեթղթերի նախատեսվող թողարկումների (լրացուցիչ թողարկումների), հետգնումների կամ ձեռքբերումների վերաբերյալ տեղեկությունները,
- 10) Ընկերության խորհրդի կողմից շահութաբաժինների առաջարկվող մեծության վերաբերյալ տեղեկությունները,
- 11) Ընկերության անվճարունակության կամ որոշակի պայմանագրով պարտավորությունների խախտման վերաբերյալ տեղեկությունները,
- 12) Ընկերության կողմից կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների, արտադրվող ապրանքների գնագոյացման հաշվարկները և մրցութային բանակցությունների գնային առաջարկները,
- 13) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ այլ տեղեկություններ:

2.2. «Ինսայդեր»՝

- 1) Յուրաքանչյուր անձ, որն Ընկերության կապիտալում իր մասնակցության, Ընկերության կառավարման որևէ մարմնում իր անդամակցության, պաշտոնի կամ այլ պարտականությունների կատարման կամ ծառայությունների մատուցման կապակցությամբ տիրապետում է ներքին տեղեկությունների (առաջին խմբի ինսայդեր),
- 2) Ներքին տեղեկության տիրապետող ցանկացած այլ անձ, որը ողջամիտ ուշադրության գործադրելու դեպքում կարող էր տեղյակ լինել, որ այդ տեղեկությունը հանդիսանում է ներքին տեղեկության (երկրորդ խմբի ինսայդեր),
- 3) Յուրաքանչյուր անձ, որը ծանոթանում է ներքին տեղեկությանը, որի աղբյուրն ակնհայտորեն մեկ կամ ավելի ինսայդեր է,

3.ՆԵՐՔԻՆ (ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ) ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

3.1 Ընկերությունը, ինչպես նաև ընկերության ղեկավարներն ու այլ աշխատակիցներն իրենց լիազորությունների շրջանակներում պարտավոր են ձեռնարկել բոլոր հնարավոր և անհրաժեշտ միջոցները ներքին տեղեկությունների գաղտնիությունն ապահովելու համար:

3.2. Ընկերության յուրաքանչյուր մակարդակի ինսայդերներին արգելվում է իրենց գործունեության, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի կապակցությամբ իրենց հայտնի դարձած ներքին (ինսայդերական) տեղեկություն հրապարակելը, ինչպես նաև իրենց անձնական կամ երրորդ անձանց շահերից

ելնելով՝ դրանք օգտագործելը, երրորդ անձանց կողմից այդպիսի օգտագործման հնարավորություն ընձեռելը (թույլատրել, չխոչընդոտել կամ այդ տեղեկության պահպանման կարգի խախտման հետևանքով դրա հրապարակումը հնարավոր դարձնելը):

3.3. Ընկերությունն իրավունք ունի սահմանել ներքին (ինսայդերական) տեղեկությունների պահպանման և դրանց հրապարակման կանխարգելման միջոցներ, որոնց նպատակն է՝

1) Ներքին տեղեկությունների օգտագործման սահմանված սահմանափակումների հիման վրա Ինսայդերների նկատմամբ վերահսկողության իրականացումը,

2) Ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործման կարգի սահմանումը, այդ թվում ինսայդերների կողմից ներքին (ինսայդերական) տեղեկությունների օգտագործումը ի վնաս Ընկերության շահերի:

3.4. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահմանման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներն են՝

1) Ընկերության հատուկ տարածքների ազատ մուտքի սահմանափակում,

2) Ինսայդերների հաշվառումը,

3) Ներքին (ինսայդերային) տեղեկություններ պարունակող նյութական կրիչների վրա «Գաղտնի» կամ «Հույժ գաղտնի» նախազգուշացումների, ինչպես նաև Ընկերության գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունների զետեղումը: «Գաղտնի» և «Հույժ գաղտնի» համարվող տեղեկությունները պետք է մատչելի լինեն միայն ներքին (ինսայդերական) տեղեկություններին ծանոթանալու իրավունք ունեցող անձանց համար,

4) Ներքին (ինսայդերական) տեղեկությունների հասանելիության ապահովումն աշխատանքային պայմանագրերի, իսկ իրավաբանական անձ կոնտրագենտների դեպքում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա,

5) Ընկերության աշխատակիցների և իրավաբանական (ֆիզիկական) անձ կոնտրագենտների կողմից ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանման գրավոր համաձայնությունը,

6) Ներքին (ինսայդերական) տեղեկությունների մատչելիության ապահովումը միայն դրա համար հատկացված հատուկ վայրերում,

7) Ներքին (ինսայդերական) տեղեկություններ պարունակող և օրենքով սահմանված արխիվացման ժամկետից ավել պահպանվող փաստաթղթերի

ոչնչացումը,

8) Աշխատատեղերի (սեղան, դարակ, աշխատանքային համակարգիչ) հասանելիության սահմանափակմանն ուղղված միջոցառումների սահմանումը:

3.5. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումն արգելվում է:

3.6. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումն առկա է, եթե ինսայդերը՝

1) Ներքին (ինսայդերական) տեղեկությունների հիման վրա իր կամ այլ անձի հաշվին ուղղակիորեն կամ անուղղակիորեն գնում կամ վաճառում է կամ փորձում է գնել կամ վաճառել արժեթուղթ կամ դրա հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիք:

2) Բացահայտում է ներքին (ինսայդերական) տեղեկությունը երրորդ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ նման բացահայտումը կապված է ընթացիկ գործառույթների իրականացման կամ պաշտոնեական պարտականությունների կատարման հետ:

3) Ներքին (ինսայդերական) տեղեկության հիման վրա խորհուրդ է տալիս կամ այլ կերպ դրդում է երրորդ անձանց գնել կամ վաճառել արժեթղթեր կամ դրանց հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիքներ:

3.7. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումն առկա է, եթե տեղեկությունը համարվում է ներքին՝ արժեթղթի գնման կամ վաճառքի գործարքի կնքման համար և այդ տեղեկությանը տիրապետող անձը, որը հանդիսանում է տվյալ գործարքի կողմ, գործարքը կնքել է մինչև ինսայդեր համարվելը:

3.8. Հանրությանը հասանելի (հրապարակային) տեղեկությունների հիման վրա կատարված հետազոտությունները և գնահատականները չեն համարվում ներքին տեղեկություններ, նույնիսկ եթե դրանք կարող են էական ազդեցություն ունենալ արժեթղթերի և (կամ) դրանց հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիքների գների վրա:

4. ՆԵՐՔԻՆ (ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ) ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

4.1 Ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության չպահպանման դեպքում Ընկերությունը պարտավոր է անհապաղ բացահայտել ուղղակիորեն իրեն վերաբերող ներքին տեղեկությունները: Ներքին տեղեկությունները պետք է

բացահայտվեն այնպիսի եղանակով, որը կապահովի դրա արագ հասանելիությունը և հանրության կողմից այդ տեղեկությունների ամբողջական, ճշգրիտ և ժամանակին գնահատումը:

4.2 Ներքին (ինսայդերական) տեղեկությունների բացահայտումը չպետք է հետաձգվի, բացառությամբ սույն սույն գլխի 4.7 կետով սահմանված դեպքերի:

4.3 Հրապարակված ներքին (ինսայդերական) տեղեկությունների մեջ ցանկացած էական փոփոխություն պետք է անհապաղ բացահայտվի նույն կարգով և միջոցներով, որոնցով բացահայտվել են սկզբնական ներքին (ինսայդերական) տեղեկությունները:

4.4 Ընկերությունը պարտավոր է ապահովել իրեն ուղղակիորեն վերաբերող ներքին (ինսայդերական) տեղեկությունների բացահայտումը հավասարապես ներդրողների բոլոր խմբերի համար:

4.5 Եթե Ընկերությունը կամ նրա անունից կամ հաշվին գործող անձը տրամադրում է տեղեկություններ երրորդ անձանց՝ իր աշխատանքի, մասնագիտության, պաշտոնի կամ այլ պարտականությունների կատարման կամ ծառայությունների մատուցման կապակցությամբ, նա պարտավոր է հրապարակայնորեն բացահայտել դրանք նույն չափով՝ երրորդ անձին տեղեկությունները տրամադրելու հետ միաժամանակ (եթե տեղեկությունները տրամադրվել են դիտավորյալ), կամ երրորդ անձին տեղեկությունների տրամադրումից անմիջապես հետո (եթե տեղեկությունները տրամադրվել են ոչ դիտավորյալ):

4.6 Սույն գլխի 4.5 կետով սահմանված պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ երրորդ անձը, որին տրամադրվել է ներքին տեղեկությունը, կրում է օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ այդ տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու պարտականությունը:

4.7 Եթե ներքին (ինսայդերական) տեղեկությունների բացահայտումը կարող է էապես վնասել Ընկերության օրինական շահերը, վերջինս կարող է իր պատասխանատվությամբ հետաձգել ներքին (ինսայդերական) տեղեկությունների բացահայտումը պայմանով, որ նման հետաձգումը չի հանգեցնի հանրության ապակողմնորոշմանը և իր կողմից կապահովվի ներքին տեղեկությունների գաղտնիությունը:

4.8 Ընկերությունը վարում է Ինսայդերների ցուցակ (ներքին տեղեկությունների ի պաշտոնե տիրապետող կամ դրանց ծանոթանալու իրավունք ունեցող անձանց

ցուցակ), որի վարումը պետք է թույլ տա Ընկերությանը մշտապես իմանալ, թե ո՞ր աշխատակիցները և բաժնետերերը իրենց կարգավիճակի ուժով տիրապետում են ներքին (ինսայդերական) տեղեկությունների և կրում ինսայդերական պարտավորություններ:

4.9 Ընկերությունը պարտավոր է վարել այն անձանց ցուցակը, որոնք իրենց պարտականություններն իրականացնելիս կամ այլ հիմքերով առնչվում են ներքին (ինսայդերական) տեղեկությունների հետ:

4.10 Ինսայդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակիցը պարտավոր է.

1) Ինսայդերների ցուցակում հստակորեն սահմանազատել ներքին (ինսայդերական) տեղեկություններին մշտապես հասանելիություն ունեցող և այդ տեղեկությունների հետ առնչվող այլ անձանց,

2) Պարբերաբար թարմացնել Ինսայդերների ցուցակը և ապահովել տվյալ պահին ներքին տեղեկությունների տիրապետող անձանց ընդգրկումը դրա մեջ,

3) Ապահովել Ինսայդերների ցուցակում ներառված տեղեկությունների պահպանումն առնվազն 5 տարվա ընթացքում՝ տվյալ տեղեկության ինսայդերների ցուցակում ներառման օրվանից սկսած,

4.11 Ինսայդերների ցուցակում ընդգրկված անձինք պարտավոր են Ընկերության Ինսայդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակցին տեղյակ պահել ցանկացած ներքին (ինսայդերական) տեղեկությունների իրենց հայտնի դարձաց արտահոսքի մասին, իսկ ցուցակը կազմող անձը անհապաղ տեղյակ է պահում այդ մասին Ընկերության տնօրենին և խորհրդի անդամներին:

4.12 Ցուցակը վարող անձը պատասխանատու է ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանման հետ կապված պարտականությունների և ներքին (ինսայդերական) տեղեկությունների անբարեխիղճ օգտագործման համար սահմանված պատասխանատվության վերաբերյալ Ընկերության ինսայդերների տեղեկացվածությունը ապահովելու համար:

5.ՂԵԿԱՎԱՐ ԱՆՁԱՆՑ, ԱՅԼ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԹՈՂԱՐԿԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ

5.1 Ընկերության այն ղեկավար անձը, այլ աշխատակիցը կամ նշանակալից

մասնակիցը, որը ձեռք է բերել Ընկերության արժեթղթեր, պարտավոր է այդ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելու, ինչպես նաև նրանց սեփականության իրավունքով պատկանող Ընկերության արժեթղթերով անձամբ կամ երրորդ անձանց միջոցով գործարքներ կնքելու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնել Ընկերության ինսայդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակցին:

5.2 Սույն կանոնակարգի 5.1 կետով նախատեսված տեղեկացման ենթակա նվազագույն տեղեկություններն են՝

- 1) Գործարքի տեսակը,
- 2) Գործարքի կատարման օրը,
- 3) Գործարքի մյուս կողմի, շահառուի, իսկ առկայության դեպքում նաև միջնորդի վերաբերյալ տեղեկություններ,
- 4) Գործարքի արժեքը,
- 5) Գործարքի առարկան (այդ թվամ՝ արժեթղթերի քանակը, տեսակը, դասը, անվանական արժեքը):

6. ՆԵՐՔԻՆ (ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ) ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

6.1 Ընկերության այն ղեկավարը, այլ աշխատակիցը կամ նշանակալից մասնակիցը, որը սույն կանոնակարգի և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով հանդիսանում է Ինսայդեր, պարտավոր է ձեռնպահ մնալ իրեն հայտնի ներքին (ինսայդերական) տեղեկությունների հիման վրա Ընկերության արժեթղթերով անձամբ կամ երրորդ անձանց միջոցով իր կամ երրորդ անձանց հաշվին գործարքներ կատարելուց, ինչպես նաև Ընկերության արժեթղթերով գործարքներ կատարելու վերաբերյալ երրորդ անձանց խորհուրդ տալուց:

6.2 Սույն կանոնակարգի 6.1 կետով նախատեսված պահանջը չի գործում սկսած այն պահից, երբ ներքին տեղեկությունը բացահայտվում է սույն կանոնակարգի 4.1-4.5 կետերի հիման վրա:

6.3 Սույն կանոնակարգի 6.1 կետով նախատեսված պահանջը չի տարածվում Ընկերության արժեթղթերով հետևյալ գործարքների վրա.

- 1) Երբ Ինսայդերն Ընկերության արժեթղթերը ձեռք է բերել իրեն արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություններ մատուցող ներդրումային ընկերության միջոցով, եթե վերջինս սույն կանոնակարգի և «Արժեթղթերի

շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով Ինսայդեր չի հանդիսանում,

- 2) Երբ Ինսայդերն Ընկերության արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերել նվիրատվության պայմանագրի հիման վրա և նվիրատուն սույն կանոնակարգի և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով Ինսայդեր չի հանդիսանում: